Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՀԻՍՈՒՆ ՏԱՐՎԱ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Խոսքը վերաբերում է Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակված «Աշխատանք» պարբերականին, որը հրատարակվել է 1910-1915 թվականների ընթացքում և խմբագիր-հրատարակողն է եղել հայ գրական-մշակութային գործիչ Ս. Թոքաճյանը։ Երևանի տարբեր թանգարաններում ու գրապահոցներում գտնվում են «Աշխատանքի» սկզբնական շրջանի մի քանի համարներ միայն և, բնականաբար, պարբերականի մասին մեզ հայտնի էր միայն այնքանը, ինչ ասվեց վերևում։ Ուստի հասկանալի է, որ հայ գրագետները, սկսած Լեոյից, որը դեռ 20-ական թվականներին երազում էր «գեթ տեսնել այդ հետաքրքրական թերթը», մինչև օրս քիչ ջանք ու եռանդ չեն թափել՝ հիշյալ պարբերականն ամբողջությամբ կամ գոնե դրա մի մասը ձեռքի տակ ունենալու համար։

Ամեն ինչ հավանորեն այդպես էլ կմնար, եթե օգնության ձեռք չմեկներ Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, հանձինս իր պատրաստակամ անդամներից մեկի՝ հայր Ռափայել Քոսյանի։ Մեր նամակից տեղեկանալով, որ հայ մտավորականները արդեն երկար տարիներ որոնում են հիշյալ պարբերականի համարները, իսկ դրա լրիվ հավաքածուն կա իրենց՝ Վիեննայի Մխիթարյանների գրապահոցում, նա սիրահոժար մանրաժապավենի վրա անցկացրեց «Աշխատանքը» և առաքեց մեզ՝ Երևան։ Մնում է խորին շնորհակալություն հայտնել ինչպես Վիեննայի Մխիթարյաններին, այնպես էլ հ. Ռափայել Քոսյանին անշահախնդիր օգնության համար։

* * *

Մեզ առաքված «Աշխատանքի» մանրաժապավենն ընդգրկում է 1913 թ. հուլիսից մինչև պարբերականի դադարելը՝ 1915 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածը։ Սիրով հավատում ենք հ. Ռափայել Քոսյանի հավաստիացմանը, որ պարբերականի առաջին գիրքը (Մխիթարյանների գրապահոցում ամբողջ «Աշխատանքը» զետեղված է երկու գրքում), որն ընդգրկում է 1910-1913 թ. հունիսը «երբ երևան ելլե, անպայման կուղարկեմ անոր մանրաժապավենն ևս» և այսպիսով կունենանք այս հետաքրքրական

պարբերականի լրիվ հավաքածուն։ Սակայն նույնիսկ այնքանը, ինչ առաքվել է, բավականին լայն հնարավորություններ է ընձեռում մի քանի կարևոր եզրակացություններ անելու համար։

«Աշխատանքը» հրատարակվել է շաբաթը երկու անգամ՝ չորեքշաբթի ու շաբաթ օրերին և բացի հիմնական անվանումից ունեցել է նաև «Լրագիր հասարակական, տնտեսական և քաղաքական» ենթավերնագիրը։ ՈՒ պետք է ասել, որ պարբերականի ներքին բովանդակությունը ամբողջությամբ ամփոփվում է այդ ենթավերնագրի ներքո։ Հանրահայտ է, թե ինչ ժամանակներ էին 1913-15 թվականները ամբողջ աշխարհի, մասնավորապես, հայ ժողովրդի համար, և զարմանալի չէ, որ «Աշխատանքը» իրովսանն արձագանքեր այդ հարցերին։ «Հայկական մեծ դատը և օրվան մանրունքները» («Աշխատանք», 1913 թ., № 17), «Դրվագներ Բալկաններու վերջին անցքերեն» (անդ, 1913թ., № 18), «Թուրքևհելլեն պատերազմի մը նախօրյակին», (անդ, № 28) և այլ՝ նմանատիպ հոդվածներում, հաճախ նույնիսկ մասնագիտական հմտությամբ, վերլուծվում ու քննարկվում են այն երևույթները, որոնք տվյալ ժամանակաշրջանի համար առավել քան հրատապ բնույթ ունեին։

Ոչ պակաս հարուստ ու բազմակողմանի էր պարբերականի գրական-բանասիրական բաժինը։ Այս տեսակետից «Աշխատանքը» իրոք, չափազանց շատ նյութ է մատակարարում հայ գրականության բոլոր շրջաններով զբաղվող գիտնականների համար։ «Ռաֆֆու հոբելյանը» (անդ, № 2), «Գրիգոր Նարեկացի» (անդ, № 18), «Ներսես Շնորհալի» (անդ, № 24), «Հայ բանաստեղծությունը հեթանոս և քրիստոնեական դարաշրջաններուն մեջ» (անդ, № 32), «Նահապետ Քուչակ» (անդ, № 36), «Տ. Չեռքյուրյանի «Վանքը» (անդ, 1914 թ., № 71) և շատ այլ հոդվածներ, որոնցից ոմանք շարունակվում են մի քանի համար անընդմեջ, Մարի Մերսիի «Փողոցի վարդը կամ ճերմակ գերուհին» (անդ, 1913 թ., № 45), Կամիլ Ֆլամարիոնի «Աստղերուն մեջ սեր մը» (անդ, № 51), Մոպասանի «Առաջին ձյունը» և այլ դասականների՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությունները, գալիս են ապացուցելու, որ «Աշխատանքի» խմբագրությունն ու խմբագիրը իսկապես անում էին ամեն ինչ պարբերականն ավելի հարուստ ու բազմաբովանդակ դարձնելու համար։ Եվ եթե ավելացնենք, որ զանազան առիթներից

ելնելով «Աշխատանքը» հրատարակեց Ֆր. Նիցշեի «Քահանաների մասին» հոդվածը (անդ, 1914 թ., № 56), ութ համար անընդմեջ հրատարակվեց ժողովրդական հերոս Անդրանիկի օրագիրը՝ «Անդրանիկի հիշատակարանեն» խորագրով (անդ, №№ 73-81), «Կուտինական տեսարաններ» խորագրի ներքո հրատարակված հոդվածում բնութագրվեց Կոմիտասի ծննդավայրը (անդ, № 22), ներկայացվեց Արմենակ Շահ-Մուրադյանի համերգային գործունեությունը, հայկական տառերի գյուտի առթիվ ընդարձակ հոդվածաշար հրատարակվեց «Համազգային մեծ հոբելյանը» խորագրով և այլն, ապա նորանոր փաստեր պետք չեն՝ գալու համար այն որոշակի եզրակացությանը, որ նոր ստացված սույն պարբերականը իրոք արժանի է մեծ ուշադրության և հանգամանալից ուսումնասիրության։

Մեզ մոտ գտնվող «Աշխատանքի» միկրոժապավենը շուտով կհանձնենք Մ. Մաշտոցի անվան Մատենադարանին։

Հայրենիքի ձայն, 1974, № 17, ապրիլի 24